| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Էջմիածին | 853 | -3.7 | -1.2 | 5.1 | 12.2 | 17.1 | 21.2 | 25.2 | 25.1 | 20.1 | 13.0 | 6.1 | 0.4 | 11.7 | -31 | 41 |

Օդի խոնավությունը (%)

| Բնակա-վայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարե-կան | միջինը ժամը 15-ին | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Էջմիածին | 76 | 72 | 62 | 59 | 55 | 50 | 44 | 43 | 47 | 65 | 74 | 78 | 60 | - | 34 |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

| Բնակա-վայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը | | | | | | | | | | | | | Ձյան ծածկույթը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | տարե-կան | տասնօրյա առավելա-գույնը, սմ | օրերի թիվը | ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Էջմիածին | 18/14 | 20/22 | 26/25 | 37/26 | 45/29 | 26/46 | 15/34 | 10/25 | 10/27 | 25/25 | 24/46 | 18/18 | 274/46 | 48 | 44 | - |

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 20մ/վ է, 50 տարվա ընթացքում 23մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգու/մ$^2$ է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 35կգ/մ$^2$ է:

**Հիդրոերկրաբանական տեսակետից** տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են մեր ուսումնասիրվող խորությունից ցածր մոտ 6,0 մետր հորիզոնների վրա:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:

## 2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, փոսորակների, նախկինում հորատման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ հետևյալ 4 ինժեներաերկրաբանական (ԻԵՏ) տարրերը կամ շերտերը վերևից–ներքև.

Շերտ1- Խիճ, խճավազներ, կավավազային լցիչով (ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):

Շերտ2- Կոպիճներ, գետաքարեր, ավազային, ավազակավային լցիչով:

Շերտ3-Գետաքարեր, կոպիճներ, ավազային լցիչով:

Շերտ4-Գլաքարեր, գետաքարեր, կոպիճներ ավազային լցիչով:

ՌԻսումնասիրվող ուղեգծերի համար գրունտները տրվում են մինչև 3.5 մ խորությամբ (տես ստորև):

**ՀՀ Արմավիրի մարզ, ի. Վաղարշապատի, Էջմիածին քաղաքի՝ Ռ. Պատկանյան, Մոս Մանուկյան, Մ. Բաղրամյան, Հ. Թումանյան, Հ. Դանղյան, Ե. Չարենց փողոցների կառուցվող կոյուղու համակարգի և Ռ. Պատկանյան փողոցի փոխարինվող 300մմ տրամագծի խմելու ջրի ջրագծի ուղեգծերի գրունտները տրվում են երկու շերտով:**

**Շրջանցվող ջրագիծ Նկ0+00-Նկ0+60, կոյուղագիծ Կ1-Նկ0+00-Նկ11+20, Կ2-Նկ0+00-Նկ7+28, Կ3-Նկ0+00-Նկ2+02, Կ4-Նկ0+00-Նկ0+88, Կ5-Նկ0+00-Նկ4+82, Կ6-Նկ0+00-Նկ1+70**

**Շերտ1 0.0-0.2մ** Խիճ, խճավազներ, կավավազային լցիչով,
(ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 300կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 12.IVբ կարգ է:

**Շերտ2 0.2-1.0մ** Կոպիճներ, գետաքարեր, ավազային, ավազակավային լցիչով:
Ծավալային կշիռը՝ 1,8 տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 350 կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 5.3) III կարգ է:

**Շերտ3 1.0-2.0մ** Գետաքարեր, կոպիճներ, ավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ 1.9 տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 450 կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 5.4) IV կարգ են:

**Շերտ4 2.0-3.5մ** Գլաքարեր, գետաքարեր, կոպիճներ ավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ 2,2 տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 500 կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 5.5) V կարգ է:

# 3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, հ. Վաղարշապատի, Էջմիածին քաղաքում:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում ծովի մակարդակից տատանվում են՝ 870.0-881.0 մետրերի սահմաններում:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 4 շերտով:

- Ուսումնասիրվող տեղամասում ուղեգծերով, որպես հիմնատակ գրունտները հուսալի են:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:
- Գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են մեր ուսումնասիրվող խորությունից ցածր մոտ 6,0 մետր հորիզոնների վրա:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը քարաթափությունը, ճահճացումը՝ բացակայում են:
- Ուսումնասիրվող տեղամասում փոսորակները կամ խրամուղիները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ հարկ լինելու դեպքում ինժեներ-երկրաբանի կողմից կատարել գրունտների ճշգրտում:

Ճարտարագետ-երկրաբան՝ Ռ. Ասատրյան

# 4.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.

2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 " ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ"

3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «**Բնահողերի և ապարների դասակարգում**»

4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն

5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար: «Հիմնական դրույթներ»

6. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»

7. Геология АрмССР том 1 Геоморфология 1961г.

5. Դիտարկվող տարածքում մինչև 0.8 մ խորությամբ գոյություն ունեցող բացվածքների լուսանկարներ.











**Վաղարշապատի համայնքապետարանի կարիքների համար**

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ) ԵՎ Հ. ԴԱՆՂՅԱՆ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ) ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆԵՐՏՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

| Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը | Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը | Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի |
|---|---|---|
| Ցեմենտ | այո | 30 |
| Ավազ | այո | 30 |
| Խիճ | այո | 30 |
| Պողպատ | այո | 30 |
| Բիտում կամ բիտումա-պոլիմերային քանյութեր | այո | 5 |
| Ներկանյութեր | այո | 5 |

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հողաբաշյան

Վաղարշապատի համայնքապետարանի կարիքների համար

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ) ԵՎ Հ. ԴԱՆՂՅԱՆ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ) ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆԵՐՏՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

| Վերակառուցվող կամ նոր կառուցվող հատվածներ | Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի | Աղբյուրը և նորմատիվը |
|---|---|---|
| Հավաքովի ե/բ օղակներով դիտահորեր | 35-40 | ըստ գրականության |
| Պոլիէթիլենե խողովակներ | 75-80 | ըստ արտադրող ընկերությունների տրված տեխնիկական բնութագրերի |

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հողաբաշյան

«ԷՅՉ-Ի-ԷՅ» "ОЭА" "HEA" 08427494

Վաղարշապատի համայնքապետարանի կարիքների համար

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ) ԵՎ Հ. ԴԱՆՂՅԱՆ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ) ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆԵՐՏՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքները իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

Մրցույթում հաղթող Կապալառու կազմակերպությունը պարտավոր է 1 տարի երաշխիքային ժամկետում վերացնել իր կողմից կատարված աշխատանքներում, շինարարական գործընթացից առաջացած բոլոր թերությունները:

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հողաբաշյան

«ԷՅՉ-Ի-ԷՅ»
"ОЭА"
"HEA"
08427494

<u>Վաղարշապատի համայնքապետարանի կարիքների համար</u>

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ) ԵՎ Հ. ԴԱՆՂՅԱՆ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ) ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆԵՐՏՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաներ

Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ Ջրամատակարում և ջրահեռացում (Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա)

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հոդաբաշյան




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| DN | ՆԱԽԱԳԾՎՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ԿՈԼԵԿՏՈՐՆԵՐ |
| Ø | ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ԿՈԼԵԿՏՈՐՆԵՐ |
| DN | ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 25/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱԳԾՎՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ԿՈԼԵԿՏՈՐՆԵՐ |

| | | | |
|---|---|---|---|
| HΞA ENGINEERING & DESIGN ԵՐԵՎԱՆ 2025թ. | | Պատվիրատու՝ Վաղարշապատի համայնքապետարան | Պայմանագիր՝ N ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 25/3-1 |
| ՆԳԻ | Է.Հովաքաշյան | ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ) ԵՎ Հ. ԴԱՆՂՅԱՆ (ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ) ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Աշխատանքային նախագիծ |
| Նախագծեց | Ս. Թարյան | | Բաժին - ՋՋ |
| Ստուգեց | Է.Հովաքաշյան | Էջմիածին քաղաքի նշված փողոցներում նախագծվող կոյուղատար համակարգի համաձայնեցման գլխավոր հատակագիծ Մ 1:4000 | թերթ / թերթեր |
| | | | 1 / 1 |

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Վաղարշապատի համայնքապետարանի պատվերով «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊ ընկերության կողմից № ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ-25/3-1 պայմանագրի շրջանակներում մշակվել է «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենց (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Վ. Տերյան փողոց) և Հ. Դանղյան (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Հ. Թումանյան փողոց) փողոցների կոյուղու համակարգի կառուցման (ներառյալ ներտնային միացումները) աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ» աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ):

ԱՆ-ի մշակման համար հիմք են հանդիսացել Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական և ճարտարապետահատակագծային առաջադրանքները, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված միացման տեխնիկական պայմանները, տեղում մեր մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունները և Վաղարշապատի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման ինչպես նաև շահագործող և այլ շահագրգիռ կողմերի հետ կայացած քննարկումները և դրանց արդյունքում կայացված որոշումները:

ԱՆ-ի շրջանակներում մշակվել է Ե. Չարենց և Հ. Դանղյան փողոցների կոյուղու համակարգի կառուցման աշխատանքային գծագրերը (տես գծագրական մաս Բաժին-ՋՋ), ինչպես նաև համապատասխան աշխատանքային ծավալները:

Վերոնշյալ աշխատանքների նպատակը դիտարկվող փողոցներում կոյուղագծերի վերակառուցումն է ապահովելով բնակելի տներից առաջացած կենցաղային կեղտաջրերի կազմակերպված ձևով հեռացումը դեպի քաղաքային կոյուղու կոլեկտորներ:

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 3 գրքեր՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ, բացատրական մաս, ծավալաթերթ և աշխատանքների կազմակերպում

Գիրք 2 - Գծագրական մաս

Գիրք 3 - Նախահաշիվ

Ընդհանուր դրույթներ բացատրական մաս, ծավալաթերթ և աշխատանքների կազմակերպում - Գիրք 1-ով ներկայացված են ԱՆ-ի համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերը, համապատասխան բաժինների մանրամասն

աշխատանքային ծավալների նկարագրությունը իրենց քանակներով, մասնագիտական եզրակացությունները, ԱՆ-ի բացատրագիրը, աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությունը, առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկը, ըստ պահանջվող քանակի, առաջարկվող աշխատակազմի ցանկը, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումները և այլն:

Գծագրական մաս – Գիրք 2-ով ներկայացված է ԱՆ-ի աշխատանքային գծագրերը:

Նախահաշիվ – Գիրք 3-ով ներկայացված են աշխատանքային ծավալների մանրամասն նախահաշիվները:

**Տարածաշրջանի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները հետևյալն են՝**

Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքում:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** ուսումնասիրվող տարածքը տեղադրված է լճա-կուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 870.0-881.0 մետրերի սահմաններում:

**Երկրաբանական կառուցվածքում** մասնակցում են չորրորդական հասակի լճազետային նստվածքների շերտերը:

**Կլիման** ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Էջմիածին քաղաքում՝ «տաք» գոտում, ուստի բերում ենք նրան մոտ համապատասխան կլիմայական ցուցանիշները: ՌԻսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 25°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 60% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -3,7°C է, թույլ քամիները 2-3 մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Էջմիածնի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, ˚C

| Բնակա-վայրի անվա-նումը | Բարձրու-թյունը ծովի մակար-դակից, մ | Օդի միջին ամսական, ըստ ամիսների ˚C | | | | | | | | | | | | Միջին տարե-կան | Բացար-ձակ նվազա-գույն | Բացար-ձակ առավե-լագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Էջմիածին | 853 | -3.7 | -1.2 | 5.1 | 12.2 | 17.1 | 21.2 | 25.2 | 25.1 | 20.1 | 13.0 | 6.1 | 0.4 | 11.7 | -31 | 41 |

Օդի խոնավությունը (%)

| Բնակա-վայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարե-կան | միջինը ժամը 15-ին | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Էջմիածին | 76 | 72 | 62 | 59 | 55 | 50 | 44 | 43 | 47 | 65 | 74 | 78 | 60 | - | 34 |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

| Բնակա-վայրի անվանումը | <u>Տեղումների քանակը միջին ամսական մմ</u> <u>օրական առավելագույնը</u> | | | | | | | | | | | | | Ձյան ծածկույթը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | տարե-կան | տասնօրյա առավելա-գույնը, սմ | օրերի թիվը | ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Էջմիածին | <u>18</u><br>14 | <u>20</u><br>22 | <u>26</u><br>25 | <u>37</u><br>26 | <u>45</u><br>29 | <u>26</u><br>46 | <u>15</u><br>34 | <u>10</u><br>25 | <u>10</u><br>27 | <u>25</u><br>25 | <u>24</u><br>46 | <u>18</u><br>18 | <u>274</u><br>46 | 48 | 44 | - |

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 20մ/վ է, 50 տարվա ընթացքում 23մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգու/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 35կգ/մ² է:

**<u>Հիդրոերկրաբանական տեսանկյունից</u>** տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են մեր ուսումնասիրվող խորությունից ցածր մոտ 6,0 մետր հորիզոնների վրա:

**<u>Ֆիզիկաերկրաբանական</u>** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

**<u>Շրջանի սեյսմիկ պայմանները</u>**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:




**Նկ 1. Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ**

## ***ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ***

Էջմիածին քաղաքը ունի ջրահեռացման անջատ համակարգ, որը կառուցվել է սկսած 1960-ական թվականներից, այն հիմնականում իրականացված է Ø150-400մմ տրամագծի կերամիկական, ասբոցեմենտե և թուջե խողովակներից, ցանցի ընդհանուր երկարությունը մոտ 80.0կմ է, որի մի մասը վերջին տարիների ընթացքում վերակառուցվել է տարբեր ծրագրերի շրջանակներում:

Վերոհիշյալ փողոցներում ջրահեռացման/կոյուղատար համակարգը ներկայումս գտնվում է անբավարար վիճակում, խողովակաշարը բազմաթիվ հատվածներում ունի խցանված տեղամասեր, ինչը տարածքներում ստեղծում է հակասանիտարական վիճակ:

Դիտահորերը մեծամասամբ քայքայված են և քանդված, որն էլ հաճախակի նստվածքների պատճառ է դառնում ճանապարհի երթևեկելի մասերում, խաթարելով երթևեկությունը, այս և նմանատիպ խնդիրներին լուծում տալու համար սույն նախագծով նախատեսվում է վերոնշյալ երկու փողոցներում ամբողջությամբ կոյուղու նոր համակարգի կառուցում, ներառյալ ներտնային միացումների վերակառուցումը և նոր ելքագծերի կառուցումը:

***Գոյություն ունեցող համակարգի նկարներ:***









## ՄՇԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նոր կառուցվող կոյուղատար համակարգը ապահովելու է Հ. Դանղյան և Ե. Չարենց փողոցներում առաջացող կեղտաջրերի կազմակերպված ձևով հեռացումը դեպի քաղաքային կոյուղու կոլեկտոր, վերացնելով ներկայումս տիրող հակասանիտարական վիճակը, այս փողոցները հիմնականում կառուցապատված են մեկ կամ երկու հարկանի սեփական տներով:

Էջմիածին քաղաքի Հ. Դանղյան և Ե. Չարենց փողոցներում աշխատանքային նախագծով նախատեսվել է պայմանական համարակալված $Կ_1$ կոյուղու կոլեկտորի իրականացում DN315-400մմ տրամագծի, L=1120.0մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակներից, D=1.5մ և D=1.0մ ընդհանուր թվով 39 հատ գծային և անկյունային ե/բ դիտահորերի իրականացում (դիտահորերի մանրամասն մասնագրերը տես գծագրական մաս):

Նշենք նաև, որ Հ. Դանղյան և Ե. Չարենց փողոցները առաջիկա ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ամբողջությամբ հիմնանորոգել, որից ելնելով սույն ԱՆ-ով նախատեսվում է վերակառուցել բոլոր գոյություն ունեցող (շահագործումից դուրս բերվող կոյուղագծին միացված) ելքագծերը, ինչպես նաև կառուցել նոր ելքագծեր այն բաժանորդների համար, որոնք չունեն ներկայումս շահագործվող կոյուղագծին միացված թողարկներ, որպեսզի հետագայում ավելորդ անգամ չքանդվի հիմնանորոգված փողոցների ասֆալտապատ ծածկույթը:

Նոր կառուցվող ելքագծերը նախատեսված է հասցնել մինչև բաժանորդի սահմանազատման կետ, որոնց համար ևս կոլեկտորների աշխատանքային ծավալների ենթաբաժիններում նախատեսված են համապատասխան հողային և տեխնոլոգիական աշխատանքների ծավալներ:

Նշենք նաև, որ ելնելով հիմնանորոգվող փողոցների հետագա անխափան շահագործման և հուսալիության տեսանկյունից, նախագծով նախատեսված է քանդել և ապամոնտաժել ներկայումս գործող դիտահորերի ծածկի սալերը, հիմքերը և պատերը ամբողջությամբ, բաց փոսորակներում ետլիցքը իրականացնելով՝ ավազով:

Ինչպես վերը նշվեց, նշված փողոցները առաջիկա ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ամբողջությամբ հիմնանորոգել, այդ իսկ պատճառով համաձայն համայնքի ղեկավարի N3338 գրության աշխատանքային ծավալներում ասֆալտբետոնե ծածկույթի վերականգնում նախատեսված չէ:

Սույն ԱՆ-ով նախագծվող կոլեկտորների վրա դիտահորերի տեղերը ընտրված են հաշվի առնելով գոյություն ունեցող ելքագծերի տեղերը, ինչպես նաև հեռավորությունը մեկը մյուսից նախատեսվել է համաձայն СНИП-ի, սակայն կոյուղու դիտահորերի տեղերը շինարարության ընթացքում կարող են փոփոխվել՝ բացահայտված խնդիրները հաշվի առնելով, սակայն այս դեպքում ևս պետք է

պահպանվեն նախագծով տրված դիտահորերի նորմատիվային (առավելագույն) հեռավորությունները մեկը մյուսից:

Նախագծվող կենցաղային կոյուղու և գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի խողովակների ինչպես նաև այլ ստորգետնյա կոմունիկացիաների միջև հնարավոր են փոխհատումներ, շինարարության ընթացքում փոխհատվող հանգույցներում անհրաժեշտության դեպքում պետք է տրվեն համապատասխան լուծումներ:

Կոլեկտորների նախագծային թաղման խորությունների համար հաշվի է առնվել պոլիէթիլենե խողովակների վրա մեխանիկական բեռի ազդեցության պայմանը և թույլատրելի թեքությունները:

Ընդհանուր առմամբ, սույն ԱՆ-ով Էջմիածին քաղաքի Հ. Դանդյան և Ե. Չարենց փողոցներում կառուցվող կոյուղատար համակարգում նախատեսվել է՝

Պոլիէթիլենե DN400(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծի կառուցում՝ 808.0 մ:

Պոլիէթիլենե DN315(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծի կառուցում՝ 312.0 մ:

D=1.5մ տրամագծով թվով 23 հատ ե/բ կլոր օղակներով դիտահորերի կառուցում:

D=1.0մ տրամագծով թվով 16 հատ ե/բ կլոր օղակներով դիտահորերի կառուցում:

Դիտահորերի փաստացի և բանվորական բարձրությունները տես գծագրական մասում:

***Աշխատանքների կազմակերպման ընդհանուր դրույթներ և բացատրական մաս***

Սույն նախագծով նախատեսված է իրականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենց (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Վ. Տերյան փողոց) և Հ. Դանդյան (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Հ. Թումանյան փողոց) փողոցների կոյուղու համակարգի կառուցման (ներառյալ ներտնային միացումները) աշխատանքները:

## 1.1 Նպատակները և աշխատանքների ամփոփագիրը

**«Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենց (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Վ. Տերյան փողոց) և Հ. Դանդյան (Սբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Հ. Թումանյան փողոց) փողոցների կոյուղու համակարգի կառուցման (ներառյալ ներտնային միացումները)»** աշխատանքային նախագիծը,

մշակված է համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի պահանջների, ինչպես նաև տեղում իրականացված ուսումնասիրությունների և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում կայացրած որոշումների:

## 1.2 Շինհրապարակների գտնվելու վայրը

Շինհրապարակները գտնվում են ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում:

## 1.3 Ընդհանուր տեղեկություն շինհրապարակների և գոյություն ունեցող կառուցվածքների մասին

Որպես շինհրապարակ է ծառայում Էջմիածին քաղաքի վերոնշյալ փողոցները, շինհրապարակների երկրաբանական տվյալները ավելի մանրամասն բերված են Գիրք 1-ի երկրաբանական եզրակացությունում:

Վերոհիշյալ փողոցներում ջրահեռացման/կոյուղատար համակարգը ներկայումս գտնվում է անբավարար վիճակում, խողովակաշարը բազմաթիվ հատվածներում ունի խցանված տեղամասեր, դիտահորերը մեծամասամբ քայքայված են և քանդված:

Վերը նշված օբյեկտների կառուցման մեջ մտնում են հետևյալ աշխատանքները՝
Կոլեկտորների կառուցում - DN315-400մմ տրամագծի, L=1120.0մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակներից:
Դիտահորերի կառուցում- D=1.5մ և D=1.0մ ընդհանուր թվով 39 հատ գծային և անկյունային ե/բ դիտահորերի իրականացում:

## 1.4 Մուտքը շինհրապարակ և պահեստներ

Մինչև շին. հրապարակ մուտք գործելը, Կապալառուն պետք է Պատվիրատուից ստանա համապատասխան շինարարության (քանդման) թույլտվությունը:

Մինչև շինարարական աշխատանքների իրականացումը, Կապալառուն պետք է համոզվի շինհրապարակ տանող և շինհրապարակի ներսում ճանապարհների մատչելիության մեջ: Կապալառուն պետք է հետազոտի ճանապարհների վիճակը, հաշվի առնելով նրանց կրողունակության և գաբարիտային սահմանափակումները և շինհրապարակում աշխատող մեխանիզմների քաշն ու չափերը:

Թրթուրավոր մեխանիզմների տեղափոխումը ասֆալտապատ ճանապարհով անհրաժեշտ է իրականացնել տրայլերներով:

Բաց փոսորակները, խրամուղիները և հորերը պետք է ցանկապատվեն, կահավորվեն նախազգուշացնող նշաններով և լուսավորվեն գիշերային ժամերին:

Շինհրապարակի յուրաքանչյուր առանձին մաս, որտեղ կատարվում են շինարարական աշխատանքներ, պետք է մատչելի լինի բանվորների, մեխանիզմների ու մեքենաների համար:

Շինարարական նյութերը պետք է ընդունվեն և պահեստավորվեն ընդունված կարգով՝ դրանց համար նախատեսված տեղամասերում կամ պահեստներում:

## 1.5 Ինժեներա-գեոդեզիական հետազոտություն

### 1.5.1 Ընդհանուր դրույթներ

Կապալառուն շինարարական աշխատանքների կատարման ընթացքում պետք է ապահովի նախագծային նիշերը, թեքությունները, անկյունները և նախագծային մյուս պահանջները:

Իրականացնի կառուցվածքների առանցքների ու անկյունների նշահարումը և նրանց ամրացումը:

### 1.5.2 Տեղանքի տեղակայման տվյալներ

Կառուցվածքների ու կոլեկտորների առանցքային, ինչպես նաև հիմնական կետերի տեղակայումը պետք է ստուգվի և ընդունվի Ինժեների կողմից:

Հենանիշը տրամադրվում է Կապալառուին շինարարությունը սկսելու ծանուցագրի հետ, սակայն Կապալառուն շինարարական աշխատանքները սկսելուց առաջ պետք է ստուգի հենանիշի ճշտությունը գլխավոր հենանիշի նկատմամբ:

### 1.5.3 Ժամանակավոր հենանիշեր

Կապալառուն շինությունների համար պետք է տեղադրի ժամանակավոր հենանիշեր, որոնց տեղը պետք է համաձայնեցվի Ինժեների հետ:

1.5.4 Կապալառուն պետք է մակարդակաչափումով տեղակապի բոլոր ժամանակավոր հենանիշերը հիմնական հենանիշի հետ:

### 1.5.5 Շինարարության կազմակերպում

Ըստ շին.կազմակերպման նախագծի շին. աշխատանքների 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները

- ժամանակավոր շարժական շինությունների տեղադրում ըստ շինության ընթացքի
- շին. տեղամասի ժամանակավոր ցանկապատում ըստ ընթացքի
- ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրում
- շին. տեղամասի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է խրամուղիների փորման և խողովակաշարերի մոնտաժման շինարարական աշխատանքները։
Հողային աշխատանքների համար ընտրված է փոքր հզորության հակադարձ շերեփով էքսկավատոր, ավելցուկային բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով մինչև 8.0 կմ, (մեքենա-մեխանիզմերի պահանջվող տեսակները և քանակները տես համապատասխան աղյուսակում) անմիջապես խողովակաշարերի և կառուցվածքների հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքի աշխատանքով՝ ձեռքի պարզագույն գործիքներով։

Բոլոր տիպի շին. աշխատանքերն անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկնայի կանոնները ըստ СНИП III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով։

Բոլոր տիպի շինարարական աշխատանքերը պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները։ Բոլոր տիպի թաքնված աշխատանքերի համար պետք է կազմել թաքնված աշխատանքային ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված։ Շին. տեղամասը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. տեղամասի հակահրդեհային անտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը։

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ։ Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. տեղամաս պետքե մտնեն և դուրս գան մաքուր վիճակով։
Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթով, թույլ չտալով փոշու ամպի գոյացումներ։
Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը։

***Առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկ, ըստ պահանջվող քանակի***
***Շինարարության տևողությունը՝ 5.0 ամիս:***

***Աաջարկվող աշխատակազմի ցանկ***

| № | Անվանումը |
|---|---|
| 1 | Շիանարարության ղեկավար |
| 2 | Շինարարաության ճարտարագետ-շինարար |
| 3 | Շին. Մոնտաժային աշխատանքների աշխղեկ |
| 4 | Էլեկտրիկ |
| 5 | Մետաղական կոնստրուկցիաների եռակցող |
| 6 | Ատաղձագործ |
| 7 | Բետոնագործ |
| 8 | Ներկարար |
| 9 | Գեոդեզիստ |

***Աաջարկվող մեքենա-մեխանիզմների ցանկ***

| № | Անվանումը | Քանակ/հատ |
|---|---|---|
| 1 | Էքսկավատոր՝ հակադարձ շերեփով V=0.5÷0.75մ³ | 4 |
| 2 | Ավտոամբարձիչ (առնվազն 16մ սլաքի թոիչքով և 6տն. բեռնունակությամբ) | 2 |
| 3 | Ինքնաթափ բեռնատար մեքենա 15-20տն. բեռնատորողությամբ | 8 |
| 4 | Էքսկավատորին ամրացվող պննմատիկ հարվածահար մուրճ | 2 |
| 5 | Խորքային թրթռիչ | 2 |
| 6 | Հարթակային թրթռիչ | 2 |
| 7 | Շարժական էլեկտրաեռակցման սարքավորում | 2 |
| 8 | Նիվելիր/Տախեոմետր | 3 |
| 9 | Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր | 2 |

## ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| Հ/Հ | Աշխատաքների անվանումը | Ամիսներ | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | | | | 2 | | | | 3 | | | | 4 | | | | 5 | | | |
| | | Շաբաթներ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Մոբիլիզացիա | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Ասֆալտբետոնե ծածկույթի կտրման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Խրամուղիների և փոսորակների փորման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Խողովակների մոնտաժման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | Դիտահորերի կառուցման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | Կցուղու կոլեկտորի փորձարկման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Խրամուղիների և փոսորակների ետլիցքի աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Տարածքների մաքրման, բարեկարգման խրամուղիների և փոսորակների գոյություն ունեցող ծածկույթի վերականգնման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |

## ***Բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումներ***

Աշխատանքային նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի տարածքներում: Տարածքներում չկան հողերի օտարման կամ ժամանակավոր օգտագործման խնդիր, քանի որ կոլեկտորները ամբողջությամբ անցնում են ճանապարհներով:

Հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ` ուստի նրանք սահմանափակ են և կարճատև: Բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող միավորները (Տես ստորև):

Շինարարության ժամանակ կարելի է ակնկալել կարճատև բացասական ազդեցությունները`

- Օդի աղտոտում
- Աղմուկ
- Երթևեկելի ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն
- Շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով
- Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով
- Ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով:

Սոցիալական ազդեցություններից են Ճանապարհների խաթարումը և ծանրաբեռնվածության ավելացումը, բնակչության և շինարարներին սպառնացող վտանգները և այլն:

***<u>Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը վառելանյութով և քսայուղերով</u>*** բացառելու համար անհրաժեշտ է վերջիններս պահեստավորել մեկուսացված մակերեսի վրա` հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, օգտագործված քսայուղերի հավաքման համար օգտագործել հատուկ տարաներ, որոնք հետագայում կհեռացվեն հատուկ տեղադրման վայրեր կամ վերամշակման համար հատկացված տեղանքներ:

***<u>Շինարարական և կենցաղային աղբով</u>*** շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու նպատակով դրանք տեղափոխել համայնքի համապատասխան աղբավայր` նախապես պայմանագիր ունենալով համայնքի ղեկավարության կամ աղբավայրը շահագործողների հետ:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող ***<u>փոշու ազդեցությունը</u>*** նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը:

***Աղմուկի ազդեցությունը*** կանխելու նպատակով՝ սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից:

Շինարարության ժամանակ ***բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգները*** կանխելու նպատակով ժամանակավոր տեղադրման սահմանազատող մետաղական ճաղավանդակներով ցանկապատել շինհրապարակը, վերջիններիս վրա տեղադրելով գիշերային լուսավորություն համար նախատեսված առկայծող լուսատուներ: Մետաղական ճաղավանդակների նվազագույն բարձրությունը պետ է լինի 1.50մ:

Այն հատվածներում, որտեղ առկա են բնակչության ինտեսնիվ տեղաշարժ, բաց խրամուղիների և փոսորակների վրա տեղադրել ժամանակավոր հետիոտնային մետաղական, բազրիքավոր կամրջակներ:

Վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ:

Ապահովել աշխատանքային անվտանգության և առողջության կանոնները:

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Օբյեկտի անվանումը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենց (Մբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Վ. Տերյան փողոց) և Հ. Դանղյան (Մբ. Մ. Խորենացի փողոցից մինչև Հ. Թումանյան փողոց) փողոցների կոյուղու համակարգի կառուցման (ներառյալ ներտնային միացումները) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում

Ծավալաթերթ

| Հ/Հ | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավ. արժեքը (հազար ՀՀ դրամ) | Գումարը (հազար ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | *I.1. Կոյուղու կոլեկտոր-Կ1* | | | | |
| | *I.1.1. Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում | մ | 2608,0 | | |
| 2 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով խրամուղու և փոսորակի ասֆալտապատ ծածկույթի ընդհանուր մակերեսի (2991.0մ$^2$) 50%-ի չափով | մ$^3$ | 149,0 | | |
| 3 | Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով (քանդված ասֆալտբետոն և խիճ), բարձելով ա/մ | մ$^3$ | 590,0 | | |
| 4 | Բարձած ասֆալտբետոնի և խճի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 1121,0 | | |
| 5 | Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում էքսկավատորով, բարձելով ա/մ | մ$^3$ | 1200,0 | | |
| 6 | Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով | մ$^3$ | 228,0 | | |
| 7 | Կողալիցքի գրունտների բարձում ա/մ | մ$^3$ | 228,0 | | |
| 8 | Բարձած գրունտի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 3141,60 | | |
| 9 | Խրամուղու և փոսորակների մշակում IV կարգի գրունտներում, էքսկավատորով, բարձելով ա/մ | մ$^3$ | 1740,0 | | |
| 10 | Խրամուղու և փոսորակների մշակում IV կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ$^3$ | 305,0 | | |
| 11 | Կողալիցքի գրունտների բարձում ա/մ | մ$^3$ | 305,0 | | |
| 12 | Բարձած գրունտի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 3885,50 | | |
| 13 | Խրամուղու և փոսորակների մշակում III կարգի գրունտներում, էքսկավատորով, բարձելով ա/մ | մ$^3$ | 1780,0 | | |
| 14 | Խրամուղու և փոսորակների մշակում III կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով | մ$^3$ | 318,0 | | |
| 15 | Կողալիցքի գրունտների բարձում ա/մ | մ$^3$ | 318,0 | | |
| 16 | Բարձած գրունտի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 3776,40 | | |
| 17 | Խրամուղու և փոսորակների լրամշակում ձեռքով, հատակի հարթեցմամբ | մ$^3$ | 49,0 | | |
| 18 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ$^3$ | 98,0 | | |
| 19 | Խրամուղու և փոսորակի ետլիցք, ավազով՝ տոփանումով | մ$^3$ | 5522,0 | | |
| | *I.1.2. Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | |
| 1 | Կոյուղու DN400(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 808,0 | | |
| 2 | Կոյուղու DN315(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 312,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | ***I.1.3. Շինարարական աշխատանքներ*** | | | | |
| | ***Ե/բ դիտահորեր ԳԴՀ-1-28, ԱԴՀ-1-11 D=1.0, D=1.50 Hաշխ.=1.50-2.70 մ*** | | | | |
| 1 | Նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից h=10սմ հաստությամբ | $մ^3$ | 17,10 | | |
| 2 | Բետոնե վաքի իրականացում B12.5 դասի բետոնից առվակի երկաթայնացումով | $մ^3$ | 64,480 | | |
| 3 | D=1.5մ տրամագծով հավաքովի ե/բ էլեմենտներով հորի կառուցում | $մ^3$ | 65,520 | | |
| 4 | Հիմքի հավաքովի ե/բ սալ ՀՍ 15 տիպի | հատ | 23,0 | | |
| 5 | Պատի հավաքովի ե/բ օղակ ՊՕ 15-9 տիպի | հատ | 48,0 | | |
| 6 | Պատի հավաքովի ե/բ օղակ ՊՕ 15-6 տիպի | հատ | 18,0 | | |
| 7 | Ծածկի հավաքովի ե/բ սալ ԾՍ 15 տիպի, թուջե ծանր մտոցով | հատ | 23,0 | | |
| 8 | D=1.0մ տրամագծով հավաքովի ե/բ էլեմենտներով հորի կառուցում | $մ^3$ | 17,380 | | |
| 9 | Հիմքի հավաքովի ե/բ սալ ՀՍ 10 տիպի | հատ | 16,0 | | |
| 10 | Պատի հավաքովի ե/բ օղակ ՊՕ 10-9 տիպի | հատ | 22,0 | | |
| 11 | Պատի հավաքովի ե/բ օղակ ՊՕ 10-6 տիպի | հատ | 16,0 | | |
| 12 | Ծածկի հավաքովի ե/բ սալ ԾՍ 10 տիպի, թուջե ծանր մտոց կափարիչով | հատ | 16,0 | | |
| 13 | Ներդիր դետալների տեղադրում | կգ | 794,40 | | |
| 14 | Մետաղական ելարանների տեղադրում | կգ | 1040,0 | | |
| 15 | Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում | տն | 1,8340 | | |
| 16 | Պատերի արտաքին մակերեսների ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մածիկով | $մ^2$ | 500,0 | | |
| | ***I.2. Ելքագծերի վերակառուցում և նորերի կառուցում*** | | | | |
| | ***I.2.1. Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ*** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի ապամոնտաժում, պահեստավորելով տեղում | գծմ | 30,0 | | |
| 2 | Պահեստավորված եզրաքարերի մոնտաժում, բետոնե հիմքով | գծմ. | 30,0 | | |
| 3 | Գոյություն ունեցող բազալտե սալահատակի կտրում | մ | 10,0 | | |
| 4 | Գոյություն ունեցող բազալտե սալահատակի քանդում հարվածահար մուրճով, բարձելով ա/մ (0,75$մ^3$) | $մ^2$ | 15,0 | | |
| 5 | Բազալտե սալահատակի վերականգնում, 40.0 մմ հաստությամբ բազալտե սալիկներով | $մ^2$ | 15,0 | | |
| 6 | Գոյություն ունեցող դիտահորերի ծածկի սալերի ապամոնտաժում, բարձելով ա/մ | հատ | 40,0 | | |
| 7 | Բարձած ծածկի սալերի տեղափոխում 5.0 կմ, հանձնելով շահագործող կազմակերպությանը | տն | 22,0 | | |
| 8 | Գոյություն ունեցող բետոնե դիտահորերի պատերի և հիմքի քանդում, բարձելով ա/մ | $մ^3$ | 32,00 | | |
| 9 | Շին. աղբի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 78,75 | | |
| | ***I.2.2. Հողային աշխատանքներ*** | | | | |
| 1 | Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում | մ | 570,0 | | |
| 2 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով խրամուղու և փոսորակի ասֆալտապատ ծածկույթի ընդհանուր մակերեսի (414.0$մ^2$) 50%-ի չափով | $մ^3$ | 21,0 | | |
| 3 | Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով (քանդված ասֆալտբետոն և խիճ), բարձելով ա/մ | $մ^3$ | 80,0 | | |
| 4 | Բարձած ասֆալտբետոնի և խճի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 152,0 | | |
| 9 | Խրամուղու և փոսորակների մշակում IV կարգի գրունտներում, էքսկավատորով, բարձելով ա/մ | $մ^3$ | 100,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 10 | Խրամուղու և փոսորակների մշակում IV կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | $մ^3$ | 18,0 | | |
| 11 | Կողալիցքի գրունտների բարձում ա/մ | $մ^3$ | 18,0 | | |
| 12 | Բարձած գրունտի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 224,20 | | |
| 13 | Խրամուղու և փոսորակների մշակում III կարգի գրունտներում, էքսկավատորով, բարձելով ա/մ | $մ^3$ | 220,0 | | |
| 14 | Խրամուղու և փոսորակների մշակում III կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով | $մ^3$ | 42,0 | | |
| 15 | Կողալիցքի գրունտների բարձում ա/մ | $մ^3$ | 42,0 | | |
| 16 | Բարձած գրունտի տեղափոխում մինչև 8.0 կմ թափոնակույտ | տն | 471,60 | | |
| 17 | Խրամուղու և փոսորակների լրամշակում ձեռքով, հատակի հարթեցմամբ | $մ^3$ | 11,0 | | |
| 18 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | $մ^3$ | 21,0 | | |
| 19 | Խրամուղու և փոսորակի ետլիցք, ավազով՝ տոփանումով | $մ^3$ | 527,00 | | |
| *Գոյություն ունեցող կոյուղագծի քանդվող և ապամոնտաժվող դիտահորերի փոսորակների ետլիցքի ծավալները 120.0մ3-ի չափով ներառված են ելքագծերի խրամուղու ավազով ետլիցքի ծավալներում:* | | | | | |
| ***I.2.3. Տեխնոլոգիական աշխատանքներ*** | | | | | |
| 1 | Կոյուղու DN315(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 10,0 | | |
| 2 | Կոյուղու DN250(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 15,0 | | |
| 3 | Կոյուղու DN200(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 50,0 | | |
| 4 | Կոյուղու DN160(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 110,0 | | |
| 5 | Կոյուղու DN110(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, փորձարկումով | գծմ | 100,0 | | |
| 6 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN250(PVC) $\alpha = 45^\circ$ | հատ | 5,0 | | |
| 7 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN250(PVC) $\alpha = 30^\circ$ | հատ | 5,0 | | |
| 8 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN200(PVC) $\alpha = 45^\circ$ | հատ | 5,0 | | |
| 9 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN200(PVC) $\alpha = 30^\circ$ | հատ | 5,0 | | |
| 10 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN150(PVC) $\alpha = 45^\circ$ | հատ | 5,0 | | |
| 11 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN150(PVC) $\alpha = 30^\circ$ | հատ | 5,0 | | |
| 12 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN100(PVC) $\alpha = 45^\circ$ | հատ | 5,0 | | |
| 13 | Պոլիվինիլքլորիդե արմունկների մոնտաժում DN100(PVC) $\alpha = 30^\circ$ | հատ | 5,0 | | |
| 14 | Գոյություն ունեցող և վերականգնվող ելքագծերի ճակատային/անկյունային միացումներ | տեղ | 80,0 | | |
| 15 | Տեղադրվող ե/բ հորերի պատերի վրա անցքերի բացում | տեղ | 95,0 | | |
| 16 | Անցքի փակում ցեմենտավազային շաղախով | $մ^2$ | 10,0 | | |